ժանել զօրամասը մանր խմբերի, որոնց կերակրող էլ ոչ ոք չի լինի (զօրամասը գտնվում էր Բախլօլ հրուանդանի վրա)։ Վերջինս ասածին պ. Նահանգապետը պատասխանեց, որ այդ զօրամասերը պահանջվում են ադմինիստրացիայի տրամադրութեան տակ մնալու համար ամենաշատը երկու օրով և նրանց կարելի է տալ թէկուզ սուխարիներ։

Դրանից յետոյ յայտարարվեց նիստի ընդմիջում 10 րոպէով, այնպէս որ գեներալ ադիւտանտ իշխան Ի. Գ. Ամիլախօրի ժողովված ներկայացուցիչներին խնդրեց խօսել միմիանց մէջ, առանց քաշվելու յայտնել Բագուի անկարգութիւնների բոլոր պատճառները և դրանով տալ նրան հնարաւորութիւն խուսափելու որ և է անճշդութիւններից, որոնք կարող են սպրդել այն զեկուցման մէջ, որ նա պարտաւոր է ներկայացնել բարձր իշխանութեանը։ Նաւթարդիւնաբերողների ժողովի խորհրդի նախագահ պ. Ղուկասեան յայտնեց, որ նա չէր կարծում, որ ներկայ խորհրդակցութիւնը այդքան երկար կը տևէ, և նա ցերեկվայ 1 ժամին ժողովի խորհրդի նիստ է նշանակել բանւորական հարցի վերաբերմամբ, և այդ պատճառով խնդրում էր նիստի շարունակութիւնը նշանակել հետևեալ օրը։ Իշխան Ի. Գ. Ամիլախօրի նկատեց, որ նա յայտարարում է նիստի ընդմիջումն ընդամենը միայն 10 րոպէով, և պ. պ. ներկայացուցիչներից շատ է կախված ժամանակի շահումն։

Կարճ ընդմիջումից յետոյ նիստը վերսկսվեց։ Թէ հայ և թէ մահմեդական հոգևորականութեան ներկայացուցիչները, որոնք համարում էին իրանց միսիան վերջացած, հեռացան նիստից։ Նիստը վերսկսելուց յետոյ գեներալ-ադիւտանտ իշխ. Ի. Գ. Ամիլախօրի նորից դիմեց ներկայ եղողներին խնդրելով, որ նրանք, որպէս ազգաբնակութեան ներկայացուցիչներ և ընտրեալներ, որ մօտ են կանգնած վերջինին, գործ դնեն իրանց բոլոր ջանքերը վերջինին կատարելապէս հանգստացնելու համար։ Երաշխաւորելով կատարելապէս պահովել անձնաւորութիւնը և գոյքը որ և է մէկի յանցաւոր փորձից, իշխան Ամիլախօրի միևնոյն ժամանակ յայտնեց և խնդրեց յայտնել ազգաբնակութեանը, որ եթէ տեղի կունենայ յանցաւոր փորձի դէպք զինուորականների դէմ ում կողմից էլ լինի, այն ժամանակ այն տունը, որի պատուհանից կամ կտուրից կարձակվի մի գնդակ, գետնի հետ կը հաւասարվի, և թող այն ժամանակ չը գանգատվեն... Նախագահը անտանելի է համարում այն հակակառավարչական համախմբումները, որ այժմ սարքում են զանազանատեսակ մարդիկ, մինչև անգամ կանանց, մանուկների և գեռահաս աշակերտների մասնակցութեամբ։ Այդ համախմբումները, որպէս ապ՚րինի, կը ցրվեն տեղական ոստիկանութեան ծառայողները, իսկ հարկաւոր դէպքում և զօրքերը, և այդ պատճառով ցանկալի է, որ ազգաբնակութեան ընտրեալները բոլոր միջոցները գործ դնեն ամբոխի հետ զինաւորված ույժի ընդհարման առաջն առնելու համար։ Պ. Թաղիանոսեան յայտնում է, որ ամբոխը հաւաքվում է այս ու այն տեղ ցանկանալով որ և է բան լսել հանգստանալու համար։ Մամուլը ստիպված է լռել։ Քաղաքային վարչութեան ներկայացուցիչները, նիստին ներկայ եղող պատւաւոր անձինք պատրաստ են հանգստացնել ամբոխը, բայց չը գիտեն ինչով հանգստացնել նրան, ամբոխը չի լսի։ Պ. Հաջիեվ մատնացոյց է անում, որ նրանք չեն կարող առանձին ազդեցութիւն ունենալ այդ ամբոխի վրա, որովհետև նրա մէջ մասնակցում էին մեծ մասամբ զանազան սրիկաներ, և ոչ թէ քաղաքի բուն բնակիչները. այդ խմբի մէջ հաւաքվում են և ճառեր են արտասանում հրէաներ, եկւորներ, հայեր, մահմեդականներ և ուրիշներ։ Դուման մինչև այժմ չէ կարողացել գումարվել այդ ամբոխի պատճառով՝ վշտալի դէպքերի ժամանակ վնասվածների օգտին գումարներ յատկացնելու համար։ Մահմեդականների և հայերի միջև թշնամական յարաբերութիւնների պատճառները պարզելու վերաբերմամբ պ. Թաղիանոսեան և մի քանի ուրիշները յայտնում են, որ հայերի և մահմեդականների միջև չը կայ և չը կար ոչ մի թշնամութիւն, որը հաստատելու համար բերին մի շարք օրինակներ, երբ այն արիւնահեղ օրերին մահմեդականները թագցնում էին իրանց մօտ հայերին, իսկ հայերը մահմեդականներին։ Նախագահի նկատողութեանը, որ մահմեդականների դէպի հայերն ունեցած թշնամութեան մասին և ընդհակառակն՝ չէ՞ որ հեռագիրներ ուղարկեցին հէնց նրանք այստեղից զանազան քաղաքները—ներկայ եղողներից մի քանիսը պատասխանեցին, որ այն օրերը, երբ փողոցներում կոտորած էր և ամեն տեղ ընկած էին սպանվածների դիակները և ճշտօրէն ոչ ոք չը գիտէր գործերի դրութիւնը, հայերի և մահմեդականների փոխադարձ յարաբերութիւնների մասին դժուար չէր և մի փոքր չափազանցութիւն թոյլ տալ։ Պ. Թաղիանոսեան, ապացուցանելով թշնամութեան բացակայութիւնը հայերի և մահմեդականների միջև, որոնք եկել են այս երկիրը 700 տարի առաջ, ասում է, որ նրանց մէջ կարող էր միայն նախանձ լինել։ Թշնամութեան մասին խօսք չէ կարող լինել, մանաւանդ, որ արիւնահեղ գործը սկսել էին 50—100 անձինք, և եթէ իր ժամանակին կանգնեցնէին նրա զարգացումը, այն ժամանակ այդ դէպքերը այդպիսի ահագին չափեր չէին ընդունի։ Բայց պ. Նահանգապետը ոչ ոստիկանութիւն ունէր, ոչ զօրք։ Պ. Բիկօվ ասում է, որ ներկայ յանձնաժողովի վրա դրված է երկու խնդիր. պարզել եղած դէպքերի պատճառները և հանգստութիւն հաստատել։ Արիւնահեղ դէպքերի ժամանակ այդ բանը չը կար Բագւում, «բայց խղճով,—ասում է նա,—պէտք է ասեմ, որ անիշխանականների և յեղափոխականների այժմ սարքվող ժողովները կապ ունեն եղած կոտորածի հետ։ Իշխան Դադիանի իրաւունք ունէր ասելու, որ ոչ ոք չէր կարող մահմետականներին գրգռել հայերի դէմ, անպատճառ այդտեղ մի ծածուկ թշնամութիւն է լինելու։ Եղած կոտորածի պատճառներից մէկը նա համարում է իբր թէ մի ինչ որ հայկական կոմիտէի գոյութիւնը։ Ո՞ւմից է բաղկացած այդ կոմիտէն, եթէ նա գոյութիւն ունի, և ինչ են նրա ֆունկցիաները—յայտնի չէ, բայց նրա գոյութեան մասին բոլորը գիտեն։ Այդ գաղտնի կոմիտէն ժողովարարութիւններ է անում իր գաղտնի գործերի համար, նամակներ է ուղարկում սպառնալիքներով, յաճախ ի կատար ածելով այդ սպառնալիքները, և այդպիսով սարսափ է տարածում, ահաբեկելով նրանց, որոնց նա մահվան է դատապարտում։ Այդ կողմը շատ էական է, և ամենից առաջ հասարակութիւնից կախված բոլոր միջոցները պէտք է ձեռք առնել այդ կոմիտէի գործունէութեանը վերջ տալու համար։ Իշխ. Ի. Գ. Ամիլախօրի. «Ես էլ գիտեմ, որ կոմիտէից նամակներ էին ստանում սպանելու սպառնալիքներով»։ Ֆարրուխ-բէգ Վէզիրօվ. «Ո՞վ էր սպանում»։ Իշխ. Ի. Գ. Ամիլախօրի։—«Ասենք հէնց դուք։ Ինչու են սպառնում ձեզ սպանել»։ Պ. Վէզիրօվ. «Նամակը, որի մասին խօսվում է, ես երէկ ստացայ որ և է թշնամուց։ Հայկական կոմիտէն կնիք ունի, իսկ այդ նամակի վրա կնիք չը կար, և այն էլ նամակում ասված էր, որ ես «ապաշխարեմ»։ Իշխ. Ի. Գ. Ամիլախօրի. «Այդպիսի նամակներ պատռում են և դէն են գցում, և ոչ թէ նրանց մասին պատմում են ուրիշներին»։ Պ. Բիկօվ. «Կոմիտէն չարիքի աղբիւրն է»։ Պ. Թաղիանոսեան ասում է, որ հայկական կոմիտէի դէվիզն է—հնարաւորութիւն տալ Թիւրքահայերին մարդավարի ապրել և նա ոչինչ բան չունի ռուսաց կառավարութեան դէմ։ Պ. Ղուկասեան չէ հասկանում, թէ ինչ կապ կայ յեղափոխական մասսայի և այստեղ հաւաքվածների միջև։ Կոմիտէի գոյութիւնը նա չէ հերքում։ Սոցիալական շարժումը աճում է ամեն տեղ, և այդ բանի համար չէ կարելի մեղադրել ազգերին... Եղբայրասպան պատերազմը չէ կոմիտէի նպատակը։ Եթէ նրանք կամենում են օգնել... -մեր գործը չէ։ «Ինչպէս կարող ենք մենք արգելել նրանց, չը գիտենք»։ Իշխան Ի. Գ. Ամիլախօրի։ Հարցին դուք ուրիշ լուսաբանութիւն էք տալիս։ Աստուած մի արասցէ, ոչ ոք չէ կասկածում ձեզ, որ դուք մասնակից էք, բայց պէտք է հաւատալ, արդեօք կոմիտէն գոյութիւն ունի՞. և արդեօք նրա գոյութիւնը չէ՞ կոտորածի պատճառներից մէկը։ Յայտնի է, որ հայերի կոտորածի պատճառը Թիւրքիայում—հայկական կոմիտէն է»։ Պ. Վաչեանց յիշեցնելով 1883 թւին Բագւում տեղի ունեցած ջարդը մահմեդականների և ռուս բանւորների միջև (տաճկագործների) բացականչում է. «Չէ՞ որ այն ժամանակ ոչ ոք չէր ընդհանրացնում ռուսների և մահմեդականների ազգային թշնամութեան հարցը»։ Պ. Հաջիեվ, վնասակար համարելով այդպիսի կոմիտէները, ասում է, թէ չէ՞ որ այդ կոմիտէի գործունէութիւնը ուղղված է թէկուզ և Թիւրքիայում ապրող մահմեդականների դէմ։ «Դա ոչ թէ եղբայրասէր, այլ եղբայրասպան կոմիտէ է։ Ի սէր Աստուծոյ, ես չը գիտեմ ումը լսեմ, ումից վախենալ։ Այն կառավարութեանը, որի դրօշակի տակ ապրում եմ, թէ սարսափ տարածող կոմիտէի։ Ինչու մահմեդականները այդպիսի կոմիտէներ չունեն։ Եւ Աստուած չը տայ։ Եթէ գոյութիւն էլ ունենար այդպիսի կոմիտէ մահմեդականների մօտ, ես առաջինը կապստամբվէի նրա դէմ, կը հաղորդէի նրա գոյութեան մասին կառավարութեանը, եթէ մինչև անգամ հաւատացած լինէի, որ դրա համար ես անպատճառ սպանված կը լինեմ։ Եթէ հայկական կոմիտէի անդամը սպանած չը լինէր մահմեդականին, որը ապա սպանվեց մահմեդականից, եթէ տեղի չունենար նրա դէմօնստրատիվ, փառաւոր թաղումը, եթէ փետրվարի 6-ին հայերը չը սպանէին Բաբաեվին և եթէ ծաղրի չանարգէին սպանված կալանաւորի դիակը, որը սպանութիւնից յետոյ հայերը խաշեցին եռացրած ջրով, և եթէ չը թագցնէին հայ սպանողին Պարապէտի վրա, հաւատացնում եմ և համոզված եմ, որ այդ խմբական կոտորածը տեղի չէր ունենայ։

Մի քանի ձայներ. «Բաբաեվը րեվօլվեր է արձակել հայ զինուորի դէմ»։ Հաջիեվ. Սուտ է, նա գնդակ չէ խփել զինուորին։ Այստեղ ներկայ է պրօկուրօրը, որ կը վկայէ թէ հայերի սպանած Բաբաեվի մօտ գտնված րեվօլվերից մի հատ գնդակ էլ չէ արձակված։ Րեվօլվերի բոլոր փամփուշտները իրանց տեղն են, փողը չէ մխոտած, նա մաքուր է։ Խաղաղութիւն և հանգստութիւն հաստատելու համար անհրաժեշտ է խնդրել հայոց կոմիտետին, որ նա մեզ, մահմեդականներիս, հանգիստ թողնէ»։

Ի վերջոյ գեներալ-ադիւտանտ իշ. Ամիլախօրին նորից խնդրեց ներկայ եղողներին հանգստացնել ազգաբնակութիւնը, խորհուրդ տալ որ չը կազմվեն մեծ համախմբումներ, որոնք չեն թոյլ տալիս նոյն իսկ ձայնաւորներին հաւաքվել դումայի նիստին, որպէս զի գումարներ յատկացնեն ի նպաստ վնասվածների, կարօտ որբերի և այրիների։ Խնդրեց նրանց անձամբ և ծանօթների միջոցով յայտնել ամենքին, որ ժողովուրդը խմբերով չը հաւաքվի։ «Վախենում եմ, ասաց իշխան Ամիլախօրի, որ կը վնասվեն անմեղ բնակիչները, եթէ հարկաւոր լինի զէնք գործ դնել»։ Երբ Ղուկասեան հարցրեց թէ զօրքերը որքան են և քաղաքի որ մասերում են տեղաւորված, իշ. Ամիլախօրի պատասխանեց թէ Բագւում այժմ բաւականաչափ թէ հետևակ, թէ ձիաւոր և թէ թնդանօթաձիգ զօրքեր կան և համապատասխան կերպով են տեղաւորված։ Իսկ ինչ վերաբերում է Բագւի մշտական քաղաքապահ զօրքին, նա արդէն միջնորդութիւն է արել որ այդ զօրքը հասցնվի մինչև 6 բատալիօն հետևակի, վեց հարիւրեակ կօզակների և մի բատարէա թնդանօթների։

## ԻՆՉՈ՞Վ ՄԽԻԹԱՐՎԵՆՔ

—

Բագուի աղէտն է, ի հարկէ, օրվայ ամենահզօր, տիրական հարցը։ Երկար ժամանակ մեր երկիրը չի մոռանայ նրան։ Դեռ շատ տարիներ եղբայրասպանութեան արիւնը բեեռված կը մնայ մեր սրտի ու մտքի մէջ իբրև մի տանջալից, խեղդող յիշատակ։

Այսօր մենք այդ դժբախտութեան հանգամանքները չենք քրքրում։ Շարունակելով ճնշված մնալ նրա երկաթէ ծանրութեան տակ, մենք, իբրև դառնութեան բաժակը ճաշակած մարդիկ, նայում ենք մեր շուրջը, ուզում ենք սփոփանք, մխիթարութիւն գտնել մեր ցաւած, արիւնոտ սրտերի համար։

Ի՞նչ տեսանք վերջին օրերում։—Փաստեր, որոնք համախմբվելով միասին, մի անգամ էլ ապացուցին, թէ կան համայնական ահեղ ցընցումներ, որոնք մի և նոյն ժամանակ փորձաքարեր են, հարցաքննութիւններ են հասարակական իդէալների, համամարդկային նուիրական գաղափարների համար։ Նրանք պատասխանատուութեան են կանչում ազգերը, ուզում են իմանալ, թէ որքան նրանք պատրաստված են մարդկայնութեան բարձրագոյն սկզբունքներն ըմբռնելու և գործադրելու համար։

Բագուի աղէտը այդ տեսակ մի հրապարակային հարցաքննութիւն էր։ Եւ հետևանքը—ինչ երջանկութիւն—այնքան ոգևորիչ, այնքան հրաշալի, որ կարելի է սփոփված սրտով զգալ, թէ կատարեալ հասունութեան վկայականի ենք արժանացել։

Մարդկութեան կեանքը զուր չեն անուանել ցաւերի հովիտ։ Չը կայ տառապանքների այդ անհուն հովտում աւելի դիւթական, հրաշագործ մի բալասան, քան այն, որ կոչվում է եղբայրասիրութիւն։ Մենք եղբայրասիրական յուզիչ, վեհ ցոյցերի առարկայ դարձանք։ Եւ մեր վշտի մէջ կարող էինք աւելի մեծ մխիթարութիւն գտնել...

Կովկասի հին, ալեոր պատմութիւնը իր իւրաքանչիւր էջից աղաղակում է, երկու ազգեր—հայ ու վրացի—սկզբից և եթ եղել են իրար ոչ միայն դրակից, այլ և բախտակից։ Իրանց անհուն տառապանքների մէջ, արիւնի և արտասունքի ծովերով ծածկված իրանց հայրենիքի խորշերում նրանք մարտիրոսական համբերութեամբ պահում-պահպանում էին մտաւոր լոյսը։

Անցեալը եղբայրացրել է երկու ազգերը։ Ներկայում մի և նոյն հակումները, մի և նոյն քաղաքակրթական և համայնական իդէալներն են նրանց աչքի առջև։ Ներկան էլ ստիպողաբար պահանջում էր մի և նոյն եղբայրացումը։ Եւ այս գաղափարի հզօր ախոյեաններ են հանդիսացել երկու կողմերի լաւագոյն մարդիկ։

Վերջին տարիներում չար ոգին աշխատում էր որոմներ ցանել վրացի հասարակութեան մէջ։ Այդ որոմները շատ արհեստական միջոցներով էին խնամվում, որպէս զի աճեն, բարձրանան, հասնեն ազգային փոխադարձ թշնամութեան երկու բախտակից ցեղերի մէջ։ Կարելի՞ բան էր դա։—Մենք չէի՛նք հաւատում։ Երբէք։ Պատմական ճակատագիրը փոփոխել անկարող են անհատները, մանաւանդ խաւարի արբանեակները։ Ազգերը ունեն դարերով մշակված սեփական լօգիկայ, սեփական իմաստութիւն։ Ներկայումս, երբ համայն քաղաքակիրթ մարդկութիւնը, ոչնչացնելով աշխարհագրական, ազգագրական, տնտեսական, ցեղական և այլ այսպիսի բաժանումները, միանում է ընդհանուր գաղափարով ղեկավարվող հասարակական կարծիքի մէջ, որ գնալով դառնում է համաշխարհային, տիեզերական,—մենք պիտի միմեանց կրծոտէինք, կողք կողքի տուած, մի և նոյն օդով, և մի և նոյն անհաւոր հոգսերով ապրող ազգերս։ Դա կը լինէր մի կատարեալ դժբախտութիւն, մի անասելի անէծք։ Մարդկայնութեան սուրբ զգացմունքները ոչնչացրել են նոյն իսկ Ատլանտեան ովկիանոսի պէս մի ահեղ անջրպետը և այսօր Ամերիկան Եւրօպայի հետ սրտակից ու կամակից է ամեն մի դէպքում, երբ պէտք է դատապարտել դաժանութիւնը և անկեղծ համակրանքներով մեծարել բռնութեան, զրկանքների զոհերին։ Միթէ միմիանց հետ ապրող, միմիանց այնքան մօտիկ ազգերը պիտի անտարբեր ու խուլ մնային իրար բախտի վերաբերմամբ։

Այդ անհնարին էր։ Եւ Բագուի կոտորածը ցոյց տուեց, որ այո, անհնարին էր այդ։

Փետրվարի 14-ի օրը երբէք չի մոռացվի մեր երկրի հասարակական կեանքի պատմութեան մէջ։ Այդ օրը Թիֆլիսի հայոց Վանքի մայր եկեղեցու բակում տասնեակ հազարաւոր մարդիկ արձակեցին մի վեհ, բարոյական վըճիռ։ Երեւոյթի ամբողջ պատիւը պատկանում էր մեր վրացի եղբայրակիցներին։ Վրաց ինտելիգենցիան, ուսանող երիտասարդութիւնը, հոգևորականութեան ներկայացուցիչները եկան յարգելու մեր անմեղ զոհերի յիշատակը։ Եւ լաւագոյն յարգանք չէր էլ կարելի երևակայել անգամ։ Մեր վշտահար, արիւնոտ սրտերին մատուցվում էին եղբայրութեան, համակրութեան, անկեղծ, մաքուր ցոյցեր։ Գեղեցիկ, կրակոտ ճառերը հազարաւոր յուզված մարդկանց աչքի առջև բարձրացնում էին այնքան ցանկալի, այդ օրվանից այնքան շօշափելի դարձած իրականութիւնը, այն՝ որ մեզ, կովկասեան ազգերիս, միացնում են եղբայրութեան կապերը և մենք միմեանցից հեռացած, անջատված չենք լինի...

Ոչ ոք չի մոռանայ այդ գեղեցիկ օրը։ Չեն մոռանայ ոչ միայն հայերն ու վրացիները, այլ և թուրքերը, որոնք, նոյնպէս ներկայ էին այդ հանդէսին և նոյնպէս ընդունում էին եղբայրասիրութեան հաւաստիացումներ։

Վրացիները—մենք այս խոստովանում ենք անկեղծ հրճուանքով—երկուշաբթի օրը ստացան լիուլի իրաւունք պարծենալու իրանց քաղաքացիական բարձր առաքինութեամբ։ Ազգերի համերաշխութեան, եղբայրութեան գաղափարը նրանք էին, որ առաջին անգամ կովկասեան կեանքի մէջ գործնականապէս արտայայտեցին այնքան ազդու, յուզիչ, ուրախութեան և մխիթարութեան արտասուքներ գրգռող փառաւոր ցոյցով։

Այդ օրը մի նոր, հրաշալի գոյն հաղորդեց կովկասեան ազգերի կեանքին։ Անմոռանալի՜ օր։ Որքան մեծ պիտի լինի նրա ազդեցութիւնը, նրա նշանակութիւնը ամենքի համար։ Նա ցոյց տուեց, որ զուր չէինք այսքան տարի դաստիարակվում քաղաքակրթութեան անմահ սկզբունքների վրա։

